

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պոլիգրաֆիկ համար 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » արեւելիս 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Նամակ դրամ եռայլն որկեղ հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐՈՒՆԵՔ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐՈՒԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն որկոյր եւ յարմար դաստիարակ-
ները միայն կը հրատարակուին անորոշ-
ընթացիկ կամ մասամբ:
Ծանուցանել տողը 20 սանթիմ. երե-
փեւ արեւի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ՄԵՐ ԱՆԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Առանց չափազանցութեան կըր-
նանք ըսել թէ արտասահմանի հա-
յուկները, կեանքի ազատ պայ-
մաններու մէջ, անգոյն ու անըն-
պատակ կեանք մը վարէ այսօր,
ծովուն վրայ առանց կողմնացոյցի
քաղող նաւու մը նման, որ չգիտեր
թէ գէպի ո՛ր կողմ կերթայ և
ուր պիտի գտնէ ինքզինք վերջա-
պէս:

Կար ժամանակ մը ուր Եւրոպա-
յի մարդասիրական զգացումներուն
և Անգլիոյ խոստմանից բարեա-
ցակամութեան վրայ հաւատքով
լի՝ կը յուսայինք ձեռք անցնել մեր
փրկութիւնը յեղափոխական շար-
ժումներու միջոցով, որոնք տէրու-
թիւններուն առիթ պիտի տային
հայկական խնդիրը յուզելու և լու-
ծելու, հարկաւ ինպատակ մեզի,
որովհետեւ այդպէս կը պահանջե-
ին իրաւունքը, արդարութիւնը,
մարդկային խիղճը:

Այս գեղեցիկ ակնկալութիւնը
զրաւած էր մեր սիրտն ու միտքը,
դարձած էր մեր յոյսերուն և իդ-
ձերուն կեդրոնը, մէկ բառով՝ մեր
խոհալը, որուն հասնելու հզօր
ձգտումէն տարբեր բանի մը մի-
տիլ, տարբեր բան մը խորհիլ ան-
կարելի էր մեզի պարզապէս:

Իսկալը երազի մը պէս ցնդե-
ցաւ, ժպտուն յոյսեր անհետացան
և անոնց յաջորդեց սոսկալի իրա-
կանութիւնը իր անհուն ցաւերով
և խոր վերքերով, որոնք հակադ-
րեցութեան զօրեղ հոսանք մը ա-
ռաջ բերին յեղափոխական շար-
ժումներուն նկատմամբ:

Ու կարծես արտասահմանի հա-
յուկները իրերու այս կացութեան
հանդէպ՝ իր հանրային դործունէ-
ութեան միակ նպատակակէտ ընտ-
րեց հարուածել բերնով ու գրչով
հայ յեղափոխականները: Ազգա-
սիրական բարձրագոյն իմաստու-
թեան մէկ անխաբ նշանը կը նը-
կատուի այսօր քննադատել ու տն-
ուանարկել յեղափոխականները,
որպէս թէ լոկ բակիկ ու քանդիլը
բաւական ըլլար ինքնին:

Ենթադրելով որ քննադատու-
թեամբ, յարձակումով բոլորովին

վարկաբեկ ըլլալով, մեր արդէն շատ
տկարացած յեղափոխական կազ-
մակերպութիւնները լուծուէին և
ցրուէին ամբողջովին, ինչ պիտի
ըլլար հետեւանքը. ազգին վիճա-
կին բարեփոխմը, իր անդորրու-
թիւնը, փրկութիւնը, թէ զինք
չըջապատող վտանգներուն հետա-
ցումը:

Չէ՞ որ վերջապէս ամէնքս ալ
պարտական ենք մեր կարողութեան
չափով ջանալ բան մը չլինելու, ազ-
գին մէջ բարոյական նոր ուժերու և
նիւթական միջոցներու գոյացու-
մին, կամ արդէն կեցած ուժերու
զարգացումին նպաստելու կը յար-
գենք անոնք որ անկեղծ համոզու-
մով կը ըննադատեն մինչև հիմայ
կատարուած յեղափոխական շար-
ժումները. բան մը չենք կրնար
ըսել անոնց որոնք իրենց համո-
զումներուն հետեւանքով չեն հա-
մակրած ցարգ մեր յեղափոխա-
կան կազմակերպութիւններուն,
կամ հիմայ դադարած են անոնց հա-
մակրելէ: Սակայն ինչ կրնին,
ինչ գործ տեսնելու մտադիր են
իրենք և իրենց խնամի դասակար-
գելը որ ամբողջ լէգէններ կազ-
մելու չափ բազմաթիւ են ազգին
մէջ:

Կընդունինք թէ Թուրքիոյ հա-
յուն վիճակը այնքան սոսկալի իր
վրայ ծանրացող իսլամական ար-
հաւիրքը այնքան մեծ և իր թշուա-
ռութիւնը այնքան ընդարձակ է
որ խելայեղ շուարումի նման բան
մը կը շարունակէ կաշկանդել և ո
և է հանրագոտ նախաձեռնութեան
անկարող դարձնել մեր եղբայրնե-
րը Հայաստանի և նոյն իսկ Կ.
Պոլսոյ մէջ:

Սակայն արտասահմանի հայու-
թիւնը. այն հայութիւնը որ ոչ
կողոպտուեցաւ, ոչ հալածուեցաւ.
այն ո՛ւր է. ինչ կընէ: Շատ շատ
քահանայի և վարժապետի տեղա-
կան խնդիրներով կը զբաղի ու
ընդհանուր ազգին համար կենսա-
կան կարևորութիւն ունեցող հար-
ցերը մէկ կողմ ձգած՝ յեղափոխու-
թիւն կը քննադատէ: Ո՛ւր է վաճա-
ռականներու, դրամատէրներու, և
ամեն իմաստուն խոհմութիւն և
չըջահայեցութիւն քարոզողներու

միութիւնը, որ կրնար առանց ար-
դի յեղափոխական կազմակերպու-
թեանց մօտենալու իսկ տարիներու
ընթացքին մէջ ոչ միայն նշանա-
ւոր դրամական, այլ և բարոյա-
կան ներքին ոյժ մը գոյացնել, ազ-
գին ամենէն կենսական պէտքե-
րուն յատկանալի, Յեղափոխու-
թիւնը, իր մէջ երեւցած ամեն
աղտոտ գործերով և կանխահաս
շարժումներով հանդերձ՝ գտնէ անձ-
նագոհութեան գաղափարը մարմ-
նացնող մեծ դէմքեր, վսեմ գոր-
ծեր արտադրեց, որոնք պիտի բա-
ւէին մեր ամենէն գեղեցիկ յոյսե-
րուն իրագործմանը, եթէ Եւրո-
պայի քաղաքականութիւնը երե-
ւան չիգար իբր բացարձակ թըշ-
նամի Հայկական դատին:

Ոչ. անկեղծ, արդար և անա-
չառ ըլլանք: Հակայեղափոխակա-
նի գիւմակին տակ, մեր մեծագոյն
բարոյական ակտը, եսամոլութիւնն
է որ զգուշի սնունդ կը ստանայ
մեր աղէտներէն ծագած պահպա-
նողական հոսանքէն, եսամոլու-
թիւնը, որ անձնական հաշիւնե-
րու հոգածութեամբ միայն գիտէ
գոհանալ, անձին հանգիստը մի-
այն կը փնտռէ և անբառնալի խո-
չընդոտ կը դառնայ ո և է հաւա-
քական գործունէութեան:

Ուրիշ ինչ կերպով կարելի է
մեկնել ոչ յեղափոխականներու ա-
հագին մեծամասնութեան դատա-
պարտելի անշարժութիւնը, ան-
տարբերութիւնը ազգային դատին,
մեր գոյութեան դատին հանդէպ:

Ներքին է չափաւոր, մինչև իսկ
պահպանողական գաղափարներու
ծառայել, նոյն իսկ հակայեղա-
փոխական ըլլալ անկեղծ համոզու-
մով: Բայց ներքին չէ անտարբեր-
ման, երբ մեր ազգ. գոյութիւնը
պահպանել ջանալու վրայ է խնդի-
րը, երբ դատը ազգային է—բա-
ւին ընդարձակ իմաստով—որուն
ամէն մարդու, ամեն շրջանակի վե-
հագայն պարտականութիւն է ծա-
ռայել իր ըմբռնութիւններուն և գա-
ղափարներուն համիմատ:

Թող չըսեն թէ ամէն ոք շուա-
րած է իրերու արդի կացութեան
մէջ և չի գիտեր թէ ինչ կերպով
ծառայէ ազգին դատին, ինչպէ՛ս

աշակցի ազգ. գոյութեան կռուին:
Բարի կամեցողութիւնն է որ կը
պակսի, չէթէ օգտակար ըլլալու
միջոցները: Եսութիւնն է որ կը
տիրէ մեր սրտի խորերուն մէջ և
արդեւ կը ըլլայ ո և է գործողու-
թեան որ կապուած է զոհողու-
թեանց հետ:

Այս վիճակին անվրէպ դար-
ման մը ցուցնելու յաւակնութիւնը
չունինք, որովհետեւ չենք կրնար
զրչի հարուածով մը բառնալ ինչ
որ անմիջական արդիւնք է մեր
բարքերուն ամենէն տխուր մէկ
կողմին:

Սակայն միւս կողմէ՝ ճշմարտու-
թիւնը ըսել, իրողութիւնը յայ-
տարարել և լուրջ նկատողութեան
յանձնարարել որոց որ անկէ, մեր
պարտքն է:

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴՐՈՅ ՇՈՒՐՋԸ

Մեր մէջ դպրոցական հարցերով հե-
տադրբուող անհատներու բազմապիւ-
գովելի երեւոյթ մը կարելի էր համա-
րել՝ եթէ անոնցմէ շատեր միայն գոր-
ծի վրայ երեւնալու տղայական փափա-
քով կամ ուրիշ ալ աւելի մեղադրելի
շարժառիթներով ու նպատակներով չը
գործէին, եթէ անոնք իրենց քննա-
թեան կամ քննադատութեան առար-
կայ ընտրած հարցի վերաբերութեամբ
մտաւորապէս ու բարոյապէս անձեռնհաս
չհանդիսանային: Խնդիրը ծանրակշիռ
է. «մանուկներու կրթութիւնն եւ դաս-
տիարակութիւն» երեւութապէս պարզ
բացատրութեան աակ՝ ժողովրդի մը
գոյութեան պահպանման եւ անոր բար-
օրութեան հրատապ հարցը կայ գըր-
ուած: Արդ, այդ տեսակ լուրջ հարցի
մը վերաբերութեամբ տարօրինակ թե-
թեւամտութեամբ քննադատութիւններ
ընել, հեշտօրէն գատողութիւններ
յայտնել, վճիռներ կայացնել իսկապէս
ծիծաղելի է եւ վնասակար: Ոմանց լը-
րագիրներու մէջ հրապարակաւ, շա-
տերու ալ մութ անկիւններու խորը
ծածկաբար՝ դպրոցական խնդիրներու
մասին բանգէտի պէս յայտնած կար-
ծիքները կամ կարծեցեալ քննադատու-
թիւնները մինչև հիմա բնաւ օգուտ
մը չունեցան եւ չեն կրնար ունենալ.
անոնք կը ծառայեն միայն կրթութեան
հոգատար մարմիններու գործը խա-
ղաբերու, ամէն տեղ երկպառակու-
թիւն եւ գծողութիւն յարուցանելու:
Անշուշտ ամէն ատեն մարդուս եւ
մանկան բնութիւնը, հոգեբանութիւնը
խիստ բարդ եղած է, բայց հիմայ է որ

գիտութիւններու զարգացման շնորհիւ այդ բարդութիւնները ամենէն աւելի յայտնուած եւ զգացուած են: Ապագայութեան ճշմարտութիւն մըն է այլ եւս որ անհասարակ կազմող տարրերը հոգեբանական տեսակէտով ընտելացուած պարզ չեն. նա ժառանգականութեան, միջավայրի եւ կրթութեան արդիւնք է: Բայց այդ պարզ ծանօթութիւնը այսօր դաստիարակութեան արհեստը հիմնէ յեղաշրջման, վարժապետին շատ բաներու տեղեակ լինելը անհրաժեշտ զարգացման է: Հին բարի ժամանակներ կը կրթէին կամ կը յաւակնէին կրթիւ առանց բան մը նկատի ունենալու. շատ շատ կը կարծէին թէ մանկան ուղեղը խմոր մըն է զոր ուղեւորը ձեռքով կարելի էր կաշառարել. մէկ խօսքով կը կրթէին ճիշդ ինչպէս որ կը ցանէին, առանց հողի քիմիական կազմութիւնը եւ այլ պարագաներ նկատի առնելու՝ կարծելով թէ լաւ հոգնէք ստանալու համար բաւ է միայն սերմը հողին յանձնելը: Բայց այդ բարի ժամանակները վաղուց սահմանցած են անդարձ եւ անկէ ի վեր ամէն բան բարեփոխուած, կատարելագործուած է, ինչպէս գիտութիւններու, նոյնպէս ալ ճարտարարուեստներու եւ դաստիարակութեան արհեստին մէջ: Այսօր ուսուցիչը անպատճառ նախ իր խնամքին յանձնուած մանուկը պէտք է լաւ ճանաչէ, այսինքն պէտք է գիտնայ անոր հոգեբանութիւնը, եւ այն ոչ թէ վերացական, հայեցողական եւ հետեւաբար ապարդիւն հոգեբանութիւնը, այլ գիտութիւններու վրայ հիմնուած, փորձառական եւ զբաղական հոգեբանութիւնը որ մեր դերագրանցապէս գիտական դարուն ծնունդն է եւ այսօր մեզ կը ներկայանայ Գերմանիոյ մէջ Վուստ, Զուիցերլանդ մէջ Ֆլուրնս, Իտալիոյ մէջ Մոսսո, Ֆրանսայի մէջ Րիպո, Միացեալ Նահանգներու մէջ Ճէմս եւ այլ նշանաւոր վարդապետներով: Ուրեմն ինքնին կը հասկցուի թէ այդ տեսակ հոգեբան մը լինելու համար ուսուցիչ մը անհրաժեշտութիւն կենսականացած գիտութիւններու բաւականացած պաշար ունենալու է: Եւ միայն այս պատճառաւ է որ գիտական ծանօթութիւններէ զուրկ վարժապետները կը նմանցնեն նահապետական ժամանակներու արհեստագործներուն ուրոնք որքան ալ ճիշդ թափեն, բարի կամեցողութիւն ունենան, միշտ անկա-

տար ու կոշտ ապրանքներ միայն կարող են արտադրել: Երկրորդ, վարժապետը պէտք է խիստ լաւ ճանաչէ այն միջավայրը, ընկերական կազմակերպութիւնը որում մէջ իր աշակերտը կապուի եւ կոշտած է ապրիլ. պէտք է քաջամտութիւն լինի ընկերական յարաբերութիւնները կանոնաւորող բոլոր դիտական օրէնքներուն որպէս զի կարենայ իր աշակերտին կրթութեանը պատակ մը սահմանել, անոր նկարագրին ու բարոյականը որոշ ուղղութեամբ զարգացնել: Ըսել է թէ վարժապետը պէտք է լինի նաեւ ընկերաբան-բարոյագետ որ նոյնպէս անհրաժեշտութիւն կը պահանջէ բնական եւ տնտեսական գիտութիւններու պաշար: Առանց այս երկրորդ պայմանին ուսուցիչ մը չկրնար իր պաշտօնին էն լինել կարեւոր մասը, այսինքն մանկան բարոյական կրթութիւնը ի կատար հանել, եւ այն ատեն աշակերտները իրեն պէս դեկէ եւ կողմնացոյց զուրկ, ուղիւստի վրայ ձգուած նաւերու կը նմանին՝ որոնք ըստ բազմի եւ ամէն փոքր հովի ուղղութեամբ կը տարուբերին, մինչեւ որ ժայռերու զարնուելով խորտակուին:

(Շարունակելի)

ԱՆԳԼԻԱՅԻ ՄԻՍԻՕՆԱՐ ՄԸ
ԵՒ
ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏՆԵՐ

Բիզանդիոնի մէջ կը կարգանք թէ Գրեգորիոսի միջնորդութեամբ, Մ. Միլլիբրտ, Փոքր Ասիոյ հարաւային եւ արեւելեան գաւառները բրած պոպոյտն է. Պոլիս դարձեր է ուրիշ Անգլիկան պիտի երթայ: Իրեն հետ խօսակցած հայ մը, սա տեղեկութիւնները գրած է Բիզանդիոնի:

«Մ. Միլլիբրտ աւելի կը խօսի իր այցելած գաւառներուն հայ բնակիչներուն հոգեւոր եւ բարոյական վիճակին վրայ, թէ ո՞ր աստիճան հոգին Սուրբ կը գործէ անոնց մէջ, կամ, հաւանականութիւն կայ որ գործէ, եւն: Ակնհերեւ է որ այս մարդուն ինքնիրեն տուած պաշտօնը է ապէս հոգեւոր է: Նիւթականը միջոց մ'էր լուի: Գալով նիւթականին, շատ կարօտութիւններ կը տեսնէ, բայց ուրիշ ուրիշ բարւոյան յոյսերով, քանի որ գործերն եւ առեւտուրները չափուին, մշակութիւնը աւելան, եւն: Միայն ցաւալի պարագայ մը չա՛տ ծանր եկեր է իր

սրտին թէեւ չուզեր որ տեղի եւ անձի անուններ հրատարակուին, բայց կըսէ որ գաւառներուն մէջ ունեւոր Հայերը, անոնք անգամ որք չեն վերանաւած կամ շատ ծանր չեն վնասուած զբաղական տաղանդներէ, կը զփականին իրենց մէջ գտնուող հայ կարօտեալներուն օգնելու: Այս հարաւային ուղղութեամբ մ'ունին որով կըսեն թէ կարօտեալներուն օգնելու գործը մեզ չի վերաբերիր. անոնք շատ ուր են արդէն: Օգնելու պարտքը կը վերաբերի ունեւոր եւ բարեւէր միսիօնարներուն եւ պատուելիներուն որք արգէն այս տեսակ մարդասիրական ձեռնարկներու հոգածու. են յատկապէս, եւն: Գաւառացի հայ հարուստներուն այս ետաւէր գիրքը Մ. Միլլիբրտ գովելի չի գտներ ամենեւին, թէեւ իրեն բարի քրիստոնեայ՝ կծու բառեր ալ չի գործածեր:»

Բիզանդիոն հրաւէր կը կարգայ միսիօնարին պարտած քաղաքներու աղքատներուն՝ պատասխանելու անոր ծանրակշիռ գիտողութիւններուն:

ԿՈՎԿԱՍԻ ԳԱՐԹԱԿՆ ԵՐԸ

Նոր-Գար կը գրէ. «Ով որ յարաբերութիւն է ունեցել գաղթականներին հետ, ով որ ահանաւան եղել է նրանց լաց ու կոծին, նա կը հասկնայ նրանց հայրենիքը դնալու բուռն տենջը: Այսօր բոլորի երեսի վրայ նկատուում է ուրախութեան ժպիտ, բոլորի բերնից լսուում է զմանք հայրենիք, եւ ամեն կողմից խմրակներով հեռանում են. անցեալները մի խումբ վանից'ը արգէն մեկնեցան Թիֆլիսից եւ մի շարքից յետոյ կուղևորուին եւ խնուցիք: Տեղիս թիւրքաց հիւպատոսը որ առաջ ցանկութիւն յայտնողներին անցադիր չէր տալիս, այժմ բոլոր գիւղերին զոհացում է տալիս:

ԼՐԱՔԱՂ

Վերջին ժամանակներ եկեղեցականներէ գործուած տխուր արարք'եր ամէն օր երեսն կուգան ու կը գայթակեցնեն թրքահայ բարեպաշտ ժողովուրդը: Իբր նոյն կը յայտարարեն:

յանձնաժողովից, պարտաւոր են. 1. ուսումնասիրել երկրի դրութիւնը. 2. ընտրել եւ որոշել պատերազմի համար ամենայնաւոր զինքեր եւ կազմել նոյն ամբարձրութիւններ յատկապէս իր ժամանակին ազգայնական գրգռելու եւ յայտարարել ազգային ազատութեան աւետիքը: Կանոնադրութիւնը թոյլ է տալիս միմիայն մի պատիւ եւ այն էլ մահուան պատիւը: Մահուան դատաւիճիւր տալիս է միմիայն կեդրոնական յանձնաժողովը եւ կատարում է գաղտնի կերպով, իսկ հարկը պահանջած ժամանակ նաեւ բացարձակ ցեղեկուայ լուսով, գաղտնի ոստիկանութեան այն անդամներին ձեռքով, որին որ վիճակը կ'ընկնէ: Մահուան պատիւը հաստատուում է որեւիցէ գաղտնիք թշնամու հազարգելու համար, ազգային գործն գիտակցաբար մատնելու եւ կամ նորան արգելք դառնալու համար, առհասարակ ազատութեան գաղափարին դէմ լինելու համար, նոյն իսկ եթէ խնդրը վերաբերում է ուրիշ ճշնուած ազգերին: Մահուան պատիւ են ենթարկուում նաեւ 1. այն անձինք, որոնք առանց կեդրոնական յանձնաժողովի

այս տեղ միայն քանի մը զէպեր դուրս է. Պոլսոյ մէկ շարքաթուան թերթերուն մէջ հրատարակուած կը գտնենք. Սղերդի առաջին, Տեղապահ Թէոդորոս վարդ. Տիֆլիսեան գաղտնապէս խոյս տուեր է յիշեալ քաղաքէն եւ չի գիտցուի թէ ո՞ր կը գտնուի: Պատրիարքարանը այս արտասովոր զէպքը իրեն ծանուցանող Սղերդի Տէր Եղիշէ քահանային յանձնարարել է անյայտացած վարդապետին հետքերուն հետապնդել եւ ուր գտնացած ըլլալը հասկընալ:

Ղալաթիոյ եկեղեցիին քահանաներուն մէջ վէճ կը ծագի պնակի հասոյթի վերաբերեալ խնդրոյ մը մասին եւ այն աստիճան կը սաստկանայ որ Թաղ խորհուրդը անկարող տեսնելով ինքզինք տէր հայրերուն կիրքը զսպելու եւ կարգադրութիւն մ'ընելու, կը ստիպուի գիւմը Պատրիարքարանի միջամտութեան:

Թագափ առաջին փոխանորդ Տէր Յակոբ քահանայ Պատրիարքարանին կը ներկայացնէ տեղին հախկին Տեղապահ Հուրիկեան Յովնանէս վարդապետի ազգ. Մտուկէն չորթած զբաւմնեցնող հաշիւը, որ կը հասնի 6500 դուրուշի:

Պատրիարքարանի անօրէնութեամբ Մարտանի Ս. Աստուածածին վանքը զրկուած կիրակոս վրդ. այնքան գայթակեցուցիչ արարքներու մէջ կը գրտնուի որ Ամասիոյ խառն ժողովը կորոշէ պաշտօնապէս խնդրել Ս. Պատրիարքին որ բարեհաճի փորձանք վարդապետը հեռացնել վանքէն:

Բարեշնորհ քահանայ մ'ալ եկեղեցիին մէջ լուսարարին հետ կը կոռու եւ ապաւններ կը փոխանակէ:

Վերջապէս՝ օր նոր, լուր նոր:

— Թէեւ Կ. Պոլսոյ թերթերը կատարեալ լուրթիւն կը պահեն Պատրիարքին հրաժարին վրայ, սակայն անոր այցելութեանց եւ տեսակցութեանց մասին իրենց տուած լուրերը կը ցուցնեն արգէն լծէ Ս. Օրմանեան անսովոր գործունէութեան մը մէջ է: Մէկ նախարարութեան միւսը կերթայ, ամէն օր պետական մարդերու հետ կը տեսնուի, Յարութիւն բաշային հետ կը խորհրդակցի, որ Պատրիարքարան կուգայ ժողովներուն ներկայ գտնուելու ինչ որ նշան

գիտութեան՝ ապստամբութեան փորձեր են կատարում, 2. գաղտնի ոստիկանութեան այն անդամները, որոնք չբարձրաբար են կատարել կեդրոնական յանձնաժողովի որեւիցէ հրամանը, 3. այն պաշտօնաւորները, որոնք ի չարն են գործ դնում իրենց իշխանութիւնը եւ իրաւունքները, օրինակի համար, եթէ գաղտնի սուրհանդակութեան անդամները ոչնչացնում կամ բաց են առնում իրենց յանձնած, որեւիցէ նամակը, կամ եթէ գանձապահ իրեն զբոսանն է ձգում եւ կամ առանց կեդրոնական յանձնաժողովի թոյլտուութեան մտնում է նոյն իսկ ամենախնային դուրսը եւայլն եւայլն:

Ահա այդ նշանաւոր կանոնադրութեան վերաւոր կէտերը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ կանոնադրութեան մասնաւոր եւ երկրորդական կէտերից շատերը մնում էին բոլորովին անգործադրելի, որովհետեւ ոչ մի կենդանի գործ չէ կարող առաջնորդուիլ եւ սահմանափակուիլ միմիայն միտած ստանդով եւ անշարժ յոգնածներով:

ՍԱՐԿԱՒԱԳ

(11)

Նորան է պատկանում ապստամբութեան գործերի գերազոյն կարգադրութիւնը, նա է մշակում ապստամբութեան ծրագիրը, նա է նշանակում զօրապետներին, հայթայթում հարկաւոր միջոցները, հարկաւոր եղած ժամանակ զաշնակցում է հարեւան եւ հեռաւոր ազգերի հետ, որոնք գիւմում են միեւնոյն նպատակին, բուլղար ժողովրդի անունով պարտքեր է վերցնում, կազմում է մասնաւոր յեղափոխական յանձնաժողովներ եւ ունի իւր գաղտնի ոստիկանութիւնը: Գաղտնի ոստիկանութեան անդամները պարտաւորութիւնն են. 1. Գաղտնի կերպով հսկել յեղափոխական գործիչներու գործունէութեան վերայ եւ իրենց գիտողութիւնները անմիջապէս յայտնել կեդրոնական յանձնաժողովին. 2. Հսկել գաղտնի սուրհանդակութեան ճշգրտութեան եւ հաւատարմութեան վերայ. 3. Լրտեսել թիւք լրտեսներին, մեծ արթնութեամբ հետեւել տաճիկ ոստիկանու-

մըն է թէ կարեւոր խնդիրներ կը լուծուին:

— Թիֆլիսի Ներսէսեան վարժարանի այս տարուան շրջանաւարտներն են քսան եւ վեց աշակերտ, որոնց հինգը թրքաշայ են: Ռաֆֆիի կրտսեր որդին, Սրշակ Մելիք—Յակոբեան, շրջանաւարտէն մէկն է: Վերջին տարիներ շրջանաւարտներու թիւը շատ աւելի եղած է քան ուրիշ ու է ժամանակ: Շրջանաւարտները վաճառեալ եկեղեցիին մէջ հանգիստաւոր հոգեհանգիստ կատարել տուեր են վարժարանին հիմնադիր Ներսէս Ե. Կաթողիկոսի յիշատակին:

— Կ. Պոլսոյ բժշկական վարժարանին քաղաքական ճիւղէն շրջանաւարտ եղած են հինգ հայուսանողներ, որոնցմէ մին, Տ. Երուսանդ թաշճեան, ազգ. հիւանդանոցին ներքին բժիշկ նշանակուած է:

— Ֆրանսական կառավարութիւնը Պատուոյ լէգէոնի ասպետութեան աստիճանը շնորհած է բարիգաբընակ սօքթ. Սիհրան Գէմհաճեան, նի, Կ. Պոլսոյ մէջ միջոցաւորական աշխատանոցի մը հաստատման աջակցած ըլլալուն ի վարձատրութիւն:

— Կ. Պոլսոյ խառն ժողովոյ որոշման համաձայն Պուլկարիոյ այս ցերեկ հովիւ մը կարգելու մասին կրօնական ժողովը խորհրդակցութիւններ ունեցելու և որոշել է այս պաշտօնին համար եկեղեցականի մը անունանուծ կատարել ի ներկայությամբ Ս. Պատրիարքին:

— Ս. Օրմանեան հարսնիքներու ներկայ գտնուելու համար իբր անհրաժեշտ պայման կը պահանջէ որ պատկի օրհնութիւնը եկեղեցւոյ մէջ կատարուի: Եթէ հարսնիքի հրաւիրուող ամեն եպիսկոպոս և վարդապետ Պատրիարքին օրինակին հետեւէր, կըսէ ազգային թերթ մը, պակշտ տան մէջ օրհնել տալու անտեղի սովորութիւնը ինքնին կը վերանայ:

— Երկար ձգձգումներէ և վարանումներէ ետքը վերջապէս կառավարութիւնը, ըստ իր խոստման, որոշեց պետական զանազան վարժարաններու մէջ ընդունել հայ վարժարաններու աշակերտներու մէջէն զատուած 25 պատանիները: Վեց տղու համար Պատրիարքարանը կը խնդրէ որ ընդունուին բժշկական զինուորական վարժարանը, մինչդեռ Սէպրիֆը անոնց համար կառավարիկ բժշկական քաղաքային վարժարանը:

— Նիւթական Դպաստի համար ամէն կողմէ անընդհատ դիմումներ կը ըլլան Պատրիարքարանի, որ խնդրանքներու չստովանէն շրջաւարած չի գիտեր թէ ո՞ր կողմէն օգնութեան հասնի իր սահմանափակ միջոցներով: Մէկ շաբաթի մէջ դիմումներ եղած են Սամաթիոյ, Եգիպտոսի, Բարբերի, Կարնոյ գիւղերու, Քէմախի եւ գիւղերու, Թամպարայի եւ ուրիշ կաթողիկոսներու անունով:

ՖԵՐԴԱՆԱՅԻ ԻՍԼԱՄՆԵՐ

Թայմի թղթակիցի հետեւեալ տեղեկութիւնները հեռագրած է Բեթէրապուրիէն Նոյն թերթին:

Հիմա ստուգուած է որ Ֆերդանա նահանգին տպագրական շարժումը էապէս կրօնական հանգամանք ունէր և ծագած էր խարդաւանքներով և զրգուլթեամբ մահմետական կղերին որուն նիւթական շահերը փնտրուած էին: Ուստի կառավարութիւնը հրամայով իրենց զանազան հետոյթներուն և առանձնաշնորհումներուն շնչման հետեւանքով: Միանգամայն մահմետականները շատ զրգուլթած էին այն իսլամական ուղիին վերադարձումով, զոր առաջ բերին թրքական յաղթանակները Ֆոյնեբուն դէմ:

Մետիմանի ուսուցիչական խնդիրները իբրեւ իրենց պատմական կանխադրանքները իրենց համար խառն ժողովոյ պետ իհսան Մուհամետ Խալիֆ բարձր դերք մը կը զբաւէ Ֆերդանայի մահմետական կղերին մէջ և, ինչպէս դրապէս հաստատուած է, Կ. Պոլսոյ քարոզիչ շրջանակներու հետ գաղտնի համաձայնութեամբ մը շնորհիւ է որ յանգիստեցաւ կրօնական պատերազմ հրատարակել:

Բանակատեղիին յարձակումէն ետքը, խուճապէր հարածիւ համար զրկուած զինուորները բռնեցին զինքը և իր ընկերները: Այն ատեն խոստովանեցաւ իր յարաբերութիւնները Կ. Պոլսոյ հետ, յայտնելով միանգամայն իր զղջումը: յայտնեց նմանապէս թէ ապրտամբութիւնը այլ եւ այլ կէտերու վրայ միեւնոյն ժամանակ պիտի ծագէր, բայց յատկապէս չկրցաւ գործադրուիլ այլ եւ այլ դիպուածական հանգամանքներու պատճառով:

Այս յայտարարութիւններուն հետեւանքով պղծիկ պաշարման վիճակի ենթարկուեցան Ֆերդանայի զլխաւոր քաղաքները: Չորրորդ կողմեցան հարիւրէ աւելի մարդիկ որոնց մասին կը կասկածուէր թէ մասնակից են դաւին: Դնիկ պաշտօնականները տակէ ետքը պիտի արտաքսուին կառավարական վարչութիւններէ եւ ոստիկանական ծառայութիւնէ: Կեդրոնական կառավարութիւնը շատ զբաղած է ձեռք առնուելիք միջոցներով որոնք ընդհուպ պիտի ենթարկուին կոյսերական վաւերացման, փութացնելու և ամրապնդելու համար ասիական տեղական վարչութեան ձեռքով սկսած խաղաղացման գործը: Ապստամբութեան այս փորձը, տեղական վարչութեան կարծիքով, արագապէս և կատարելապէս ճնշուած է:

ԱՂԴ

Ազգ. երկսեռ վարժարանաց եւ ուսման շրջանի հրապարակային բնութիւնը կը սկսին ամսոյս 21ին և կը տեւեն մինչեւ 29:

Քննութիւնը տեղի կունենան մանչոց վարժարանին մէջ, առաւօտեան ժամը 8 1/2-12, և յետ միջօրէի՝ 2-6: Իսկ կերակի օրերը առաւօտեան ժամը 9 1/2-12 և կէս օրէ վերջ՝ 2-6:

Շաբաթ, 27 Յունիս, մանկապարտէզի բնութիւնը՝ 9-12:

Ստիպարար կը խնդրուի կրթութեան հաստատութիւնէն՝ որ բա-

րհասի իր ներկայութեամբ բաշխելու ուսանողութիւնը՝ իր առաջին քայլերուն մէջ:

Տնօրէնութիւն

Ազգ. երկս. վարժարանաց վառնայի վառնա, 16 Յունիս 1898

Ծանօթ.— Մասնաւոր հրաւիրագիր զրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայ ազգարարութիւն իբր այն նկատել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսոյ լրագիրները կը ծանուցանեն թէ Կրետէէն հոն հասեր են 219 իսլամ որդի, որոնք մայրաքաղաքին և գաւառներուն դրացական կամ ուրիշ հաստատութիւններու մէջ տեղաւորուել են:

— Կ. Պոլսոյ մաքսային պաշտօնէանները յունիս 3ին Պաթումէն եկող հինգ ճամբորդներու վրայ արգիլեալ նիւթեր գտած ըլլալով, թէ նիւթերը և թէ մարդիկը յանձնեցին ոստիկանութեան:

— Կ. Պոլսոյ մէջ առողջապահական կանոններու համաձայն կառուցուելիք կեդրոնական բաժնոց պիտի շինուի Եֆէֆ—Գուլէ: Երեսնութեան ծախք կենթարկուի 30.40 հազար օսմ. ոսկի:

— Թուրքիոյ Գոնեա նահանգին Նիյոն գաւառին Պոր գաւառակին մէջ գտնուել է հին նրբաբանդակ արձան մը, որու համար Նիյոնէի մէջ 500 ոսկի զին առաջարկուել է: Արձանը զրկուել է Կ. Պոլսոյ թանգարանին վարչութեան:

— Իշխանուհի Մարի Միթուա, նէթ տը Պուական, կին իշխան Բոպէր տը Բառմի, աղջիկ մը ծննաւ վերջերս, իշխանուհի առաջին ամուսնութենէն իշխանուհի Բիւտ տը Պուրպոնի հետ՝ ունեցած էր երեք մանչ եւ վեց աղջիկ զաւակ: Պուականսի իշխանուհիէն այլ ունեցած չորս մանչ եւ հինգ աղջիկ զաւակ: Իր գոտարներուն անդրանիկը Պուկարիոյ իշխանուհի է: Ուրեմն Պուկարիոյ վէհապետը ունի տասն եւութ անդրդի և քնի:

— Ամերիկայի բնիկ հնդիկներէն մէկը իր հայրենակիցներու առջեւ հայրենասիրական ճառ մը խօսելով, կը յորդորէ գանոնք ոչ մէկ զոհողութենէ խոյս տալ պատեւազմին յաջողութեան եւ ամերիկեան զէնքերու յաղթանակին համար: Ապահով եմ, ըսաւ ճառար, թէ բոլոր հնդիկները միայն մէկ փափագ ունին, այն է կռուիլ Սպանիոյ դէմ, որ Գրիսուափոր Գոյումպուրդիկցի Ամերիկեան գրտնէրս հաւար: Չորս հարիւր տարուան վրէժ մ'է ուրեմն զոր հընդիկները պիտի առնեն Սպանիացիներէն:

— Գոռէքսօնուսն Բոլիթիք կիմանայ թէ ուսուցիչական վարժարաններ Նիգոյայէֆի նաւարանին ապրտարած է առաջին կարգի երկու յաճախորդ ու ուրիշ չորս նաւար, որոնք պիտի ծառայեն Սեծովու նաւատորմի զօրացնելու:

— Կալիֆիոյ գիւղերուն մէջ հահահեղական շարժումը կը շարունակուի, հակառակ կառավարութեան ձեռք առած խիստ միջոցներուն: Գրագովիայի շրջակայ տեղեր լեհ գիւղացիները թալլեցին ու կրակի տուին հրէաներու քանի

մը խանութներ: Մէկ հրէայ ըսպաննուեցաւ եւ ուրիշ մ'ալ վերաորուեցաւ:

— Մէլիի դահլիճին հրաժարէն ի վեր հանրապետութեան նախագահը չի յաջողեցաւ նոր նախարարութիւն մը կազմել տալ: Քանի մը պետական մարդիկ յանձնառին այդ պաշտօնը, զոր չկրցան գլուխ հանել: Գոտարարութիւնները առաջ կուգան Ֆրանսայի երեսփոխանական ժողովին արդի կազմութեան ուր ընկերվարականները այժմ աւելի մեծ նշանակութիւն ունին քան երբէք:

— Խալիֆոյ մէջ պաշտարարական տաճնապ կայ և Թագաւորը շատ դժուարութիւն կը կրէ հրաժարեալ Ռուսիին նախարարութեան տեղ նոր մը կազմել տալու:

— Գերմանիոյ Ռայխսթակին ընդհանուր ընտրութեանց մէջ նշանակելի յաջողութիւններ ունեցան ընկերվարականները, ինչպէս իրենց դաւանակիցները ի Ֆրանսայի կղերաւիտ և յետադիմական կեդրոնէն ետքը, ընկերվարականները ամէն զօրաւոր կուսակցութիւնը պիտի ներկայացնեն Ռայխսթակի մէջ, ինչ որ մեծ իրարանցում պատճառած է հակառակ կուսակցութիւններուն:

— Սպանիացիք իրենց տխուր կացութեան մէջ միթարութիւն մը գտնելու կը միտին Միշէլ Տուզայի գիւտով, որ նոր պայթուցիկ մը հնարներէ Ամերիկացիներուն դէմ գործածելու համար: Գիւտին հեղինակը քիմիագետ—գեղագործ մըն է, որ իր ուսումը առած է Բարիդի մէջ: Իր պայթուցիկը, ոչ միայն ցարդ ծանօթ նման նիւթերէն աւելի զօրաւոր է, այլ և պայթած տեղին օդը պիտի թուանաւորէ: Չորհաւորներու ամենէն զօրաւոր մետաղեայ ծածկոյթները պիտի փշրուին եղեր սպանիական պայթուցիկին առջեւ:

— Եթէ իրերը կառավարական շրջանակներէ ներշնչուող թերթերու հրատարակութիւններէն դատենք, պէտք է ընդունել թէ Չինաստանն է որ ուշ կամ կանուխ եւրոպական տէրութեանց մէջ վրտանաւոր անհամաձայնութիւններու և վերջապէս պատերազմի պատճառ պիտի դառնայ:

Նօյմարի որ Բեթէրապուրի կիսապաշտօնական համարուող թերթերէն մէկն է, անդիական երկու նախարարներու ճառերը, որոնց մէջ Ռուսիոյ դէմ յարձակողական ոչինչ կար, առիթ կը սեպէ յայտարարելու թէ Անգլիոյ վերջապէս իրեն դէմ կանգնած պիտի տեսնէ Ֆրանսայի, Ռուսիոյ և Գերմանիոյ դաշնակցութիւն մը որ պիտի կարողանայ ի հարկին զէնքի զօրութեամբ արգելք ըլլալ Անգլիոյ գաղտնի դիտաւորութիւններուն և խորամանկ խաղերուն Չինի նկատմամբ:

Օրիորդ Արմաւանի Սահակեանի վարած աղկանց կրթարանին տարեկան քննութիւնները սկսան ամսոյ 15ին ու պիտի վերջանան 25ին: Քննութիւնները կը կատարուին ամէն առաւօտ, ժամը 9-12:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Սթանպուլու պիւտրիտիկինէ նազարէն՝ Գարատաղ սինօլարըն տա ասայիշ վէ էմնիյէթ եէնիտէն իպգաւ օլմուշ, վէ Արնավուտար քէնտի քէօյլէրինէ տաղըմըշար տըր:

— Բուսիայա էօտէնէճէք թաղմինաթը հարպիյէնին պազայէլէրինէ մահսուպէն 300 պին լիւր թէսվիյէ օլընմասը հազըլնտա Օսմանլը պանգասը վէ Տուլունը Ումոււիյէ իտարէսի պէյնինտէ պիր իթթիֆազ հասըլ օլմըշ տըր:

— Պապը Ալի՝ Բէթէրսպուրկ, Բարիզ, Բօմա վէ Լօնտրա թիւրք սէֆիւլէրինէ պիր թահրիւրթը ու մուսիյէ կէօնտէրիպ, թիւրքիա նըն բէյինէ միւրաճաթ օլուն մագսըլըն կիրիտ հագըլնտա վէ բիլէճէք հէր պիր դարարա գարշը բուօթէսթօ իթմիշ տիր:

— Բուսիա Գարատաղա եէնի պիր հէտիյէ տահա իթմիշ տիր, եանի, Գարատաղ օրտուը իչիւն՝ եաթագ, ճէրրահ ալէաթլարը վէ սայիրէտէն իպարէթ թէքմիլ պիր խաթախանէ թագըմը: Բրէնս Նիգիթանը եաթէրլէրինտէն պիրիսի պու հէտիյէլէրի թէսլիմ ալմագ վէ ջէթինէյէ կէթիւմէք իչիւն Բէթէրսպուրկա կիթմիշ տիր:

— Ֆիլիպէտէ նէշր օլընտն Մուշ վազնէ կազէթասը՝ պիր խալը էրմէնի մուհաճիւրլէրին Սթանպուլա ավտէթինտէն սօնրա, Պուլկարիտա գալըշ օլան մուհաճիւրլէրին էֆքեար վէ արզուարընը անլամագ իւզրէ՝ թիւրք հիւքիւմէթինին Սթանպուլու վէ էտիրնէտէն խաֆիյէլէր կէօնտէրմիշ օլտուղընը պիւտրիյօր: Տէմէք՝ Պապը Ալի էրմէնիլէրին նէ արզու վէ նէ էֆքեարա խըզմէթ իթտիքլէրինի հալէ՝ պիւմէյօր ը՛մը՝:

— Ալմանիա իմրէրաթօրընըն մութանթան սուրէթտէ գապուլիյէթի իչիւն թիւրքիտա ֆէվզէլատէ հազըլըլար կէօրիւնմէքտէ տիր:

Պէյրուլտա պուլունան ասքէր վէ գապըթան իչիւն ճէտիտ իւնիֆօրմար եաբըլմըշ տըր: Չապըթան ասքէրէ հէր կիւն պէօյիւք տըզգաթլա թալիմ իթտիւմէքտէ տիր:

Սուլթանըն եաթէրլէրինտէն պիրիսի պիր միւհէնտիս իլէ պէրապէր՝ իմրէրաթօրըն կէչէճէք ևօլլարըն թամիր վէ իսլահնա նէզարէթ իթմէքտէ տիր:

— Պապը Ալի Բուլթօ Լաիոս վուգուաթընտան տօլայը հէօքիւմէթ թարաֆընտան Ֆրանսայա հէր նէվ թարգիյէ վէրիլէճէկինի

Ֆրանսըզ սէֆարէթ հանէսինէ պիւտրիւմիշ տիր:

— Սթանպուլտն Յունիս 14 թուրիսլէ քէշիտէ օլընտն պիր թէլէկրաֆա կէօրէ՝ Սանաա շէհրինի ապլօգո իտէն ասըլար մաղուպ օլմուշար վէ տաղըլմըշար տըր: Հէօքիւմէթ պու հալատիսի ալտըդտան սօնրա էքմէնէ 7000 ասքէր տահա կէօնտէրտի: Ասըլարըն սէրկէրտէսի համիտ իսմինտէ պիրիսի օլուպ, Արապլարը՝ թիւրքլէրտէն պիւսպիւթիւն ալըլմայա վէ եալընըզ քէնտիսինի ամիր թանըմաղա տալէթ իթմէք իչիւն պիր իլաննամէ նէշր իթմիշ տիր:

— Թէսալիտան ավտէթ իտէն հէքմէլէր վէ էճաճըլար էքմէնէ կիթմէկէ մէճպուր օլմամագ իչիւն Սթանպուլտա կիզլէնմէքտէ իմիշլէր:

— Սիվաստան Գայսէրիյէ կիտէն կաթիլկ միսիօնարարընը սօյան հայտուտար թուլթուլմաշար, չալտըլարը էչեա վէ սայիրէնին պիր գըմը պուլունմըշ վէ Սիվաս Ֆրանսըզ գօնսօլսընա թէսլիմ օլունմըշ տըր:

— Թարապիզօն բօսթախանէսին տէ 1000 լիւրա գատար չալընմըշ օլտուղընտան, թահգիգաթ իչիւն Սթանպուլտան մախսուս մէմուլար կէօնտէրիլմիշ տիր:

— Կիրիտտէ մուվազգաթ պիր իտարէ թէէսիսինին էվրօրա թարաֆընտան սիւրիւնմէքտէ պըրազըլմասը կիրիտիլէրին սապըլընը թիւքէտիյօր: Մէճլիսը ումոււմի բէյիսի Սֆաքիտնաթիս, ասըլարա սապը իթմէլէրինի նասիհաթ իթտիքտէն սօնրա, ամիրալարա պիր պէյաննամէ կէօնտէրիպ, 1897 մայիս 17տէ վատ օլունան իտարէնին թէշքիլինի թալէպ վէ չիմտիքի հալ պէօյլէ տէվլամ իտէր իսէ, ասըլարը սէօզ իլէ գանտըրամալաճաղընը վէ եէնիտէն գարըշըզըզ գուհսուր իտէճէկինի պիւտրիւմիշ տիր:

— Սթանպուլ Պուլկարըն պիր թէլէկրաֆընա նազարէն՝ Բուսիտա պուլունան 30 պին էրմէնի մուհաճիւրլէրին թիւրքիայա ավտէթ իթմէլէրի հազըլնտա Բուսիանըն պուլունան պէօյլէ իսրար իթմէլէրի իչիւն Պապը Ալի չալըշմագտա տըր:

— Սթանպուլ կէօմրիկինտէ կէօյա վառնատան կէօնտէրիլմիշ վէ տինամիթ իլէ պօմպա չամիլ պիր սանտըլըն բօլիցիա թարաֆընտան թուլթուլմուշ օլտուղը պաղը կազէթալար պիւտրիւրիյօրալ:

Ի Խ Թ Ա Ր

Շիմտիյէ գատար կազէթա պէտէլինի էօտէմէյէն ապօնէլէրիմիլէ սէնէնին ալթընըն ալընտա պուլունտըլմըզը, կազէթա մասալաթընը բէշին բարա իլէ էօտէմէկէ մէճպուր օլտուղըլմըշտէր խաթըր վէ պօրճարընը ՊիլԱ թէլէիսի թէսվիյէ իթմէլէրինի բէճա իտէրիլ:

Տ Ա Խ Ի Լ Ի Յ Է

Բրէնսէս հազըլէթլէրի՝ Բրէնս Պօրիս, Բրէնս Քիւրիլ վէ Բրէնս սէս էվտօքսիա հալարաթը իլէ պէրապէր մայիս 9տա էպէնթալա ազիմէթ իթմիշլէր տիր:

— Պու սէնէ առքէր մանօլրասը զարպ թարաֆը սինօլարընա եազըն իճրա օլընաճաղընաան՝ 5 կիւն էվլէլ Սօֆիատան 12 բարէ պէօյիւք Գրուր թօրլսըր Յարիպլօտ ճիւրընտ սպուլընան իսթիհքեամլարա կէօնտէրիլմիշ տիր:

— Հարպիյէ նէզարէթի էմրի իլէ թէշքիլ օլընան խուսուսի պիր գօմիսիօն սիւվարը ասքէր վէ թօրճը ալալարը իչիւն եէրլի պարկիւրլէր իլթիւրա իտէճէք տիր:

— Սուլթան Տօպրիշ միւֆթիւսը Սալիմ էֆէնտիյէ տէօրտիւնըն օսմանիյէ նշանը վէ Տօպրիշ մէպուսանընտան Կ. Բէյէֆէ, Հասան վէ Մէհմէտ Քիւրայի էֆէնտիլէրէ, թուլթաքան մէպուսանընտան Մահմուտ աղայա վէ Կ. Օպրաշօֆա տէօրտիւնըն մէճիտիյէ նշանը իհսան իթմիշ տիր:

— Ալիւրէն Շուլմուտա գուհսուր իտէն եանիլըն զարարը 100 պին ֆր. թալիմին օլունը յօր: Եանմըշ օլան էպիլիյէլէրտէն հիշ պիրիսի սիկուլթոյա գօնմամըշ իտի: Ալթէշի սէօնտիւրմէք իչիւն եարտըմա կէլէն ասքէրլէրտէն սէքիլի պիր տիւքքեանտա սաղը խալը ֆիշէնիլէրին բաթլամասընտան եալալանմըշար տըր:

Եէնի թիւհարէթ գանուննամէսի աճեամը մուհիպիւնէ թիւհարալար վէ տիւքքեանըլար ֆիւրմալալընը իչիւրինէ տայիւր տիկէր պաղը մալիւմաթլար իլէ պէրապէր նօթարիուսարա պիւտրիլմէկէ մէճպուր օլուպ, յունիս սօնընա գատար պու վաղիֆէլէրինի իճրա իթմէլէրիլէր պին ֆրանգա գատար ճէլայի նագտիյէ տիւշար օլաճաղարընտան, իճալընըն իճրասընա մուսարաթ իթմէլէրինի միլլէթտալարըմըլա թալիյէ իտէրիլ:

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Մանիլանըն ասըլար թարաֆընտան զապթ օլունտըլընա տայիւր կէչէն հաֆթա չըգան հալատիս թէքզիպ օլունմըշ իսէտէ, միլլէր շէհրին 4 կիւն էվլէլ ասըլարա թէսլիմ օլտուղը կիւն թէլէկրաֆ հալատիսաթընտան տըր:

Ամիրալ Գամարանըն նէրէտէ պուլունտըլը պիւլինմէյօր:

Ճէնէնալ Շաֆիթէր ամէրիգա ասքէրի իլէ Տարկիլիտէ (Գուպա) գարայա չըգմըշ տըր: Եէրլի ասըլար Ամէրիգալլարա մուպէնէթ իթմիշլէր, վէ Սպանիալլար թարաֆընտան հիշ պիր մուգալէմէթ վուգու պուլմամըշտըր:

Սանթիալօտա սարը սըլմա

հասթալըլը Ամէրիգա ասքէրին տէ հալըմագտա օլտուղը բիվալէթ օլունըյօր:

Ամէրիգալլար Գուպատա գարայա չըգտըգտան սօնրա, իքի տիւշէն պէյնինտէ իքի տէֆա ուֆաք մուսատէմէ վուգու պուլմուշ տըր:

Պիր բիվայէթէ նազարէն՝ ամիրալ Գամարա Սուլէիկ կէչտիկի կիպի, Սպանիանըն սէվաշիլտէ վաղը շէհրիլէրինի վուրմագ իւզրէ պիր գաշ ամէրիգա զըրհըլարը Սպանիայա մուլթէվէճէհի հարէքեաթ իտէճէքլէր իմիշ:

Մուհարէպէյէ խիթամ վէրմէք իչիւն էվրօրա տէվլէթլէրին մուսալէլէ իտէճէքլէրի կիւն բիվալէթ օլունըյօր:

Ամէրիգա սուհըր գապուլ իթմէք իչիւն, Բուլթօ Ռիգօնը մուհարէպէ թալմինաթը մագամըն տա քէնտիսինէ թէշք իտիլմէսինի վէ Գուպանըն մուսթագիլ օլմասընը թալէպ իթմէքտէ իմիշ:

ԶԱԽԻՐԻ ԲԻԱՅԱՍԸ

Վառնա 16 Յունիս
Պուշտայ
Վալօն Եօզլիպրա 47-51, հէքթօլ. 9.50-10 ֆրանք
Արապա, լիպրա 47-55 հէքթօլ. 8-8.50 ֆրանք

Արաւ
Լիպրա 38-40, հէքթօլ. 4.80-5.20 ֆրանք

Յաւադաւ
100 օգգասը 15-20 ֆրանք՝ մալա կէօրէ

Արապա մուամէլէսի՝ Նարօլէոն 21 ֆր. հիսապը իլէ տիր:

Կիւնտէ 5—ն արապա պուլտայ, 4—5 արապա արաւ կէլմէքտէ տիր: Մըսըր Եօզ տըր:

Տ Պ Ա Ր Ա Ն

Լրագրիս վերջին երեսի սիւնակներուն մէջ օտար լեզուներով ալ աղբեր կը գետնօղին: Առանձին կը տպագրուին գրքեր, տետրակներ ու կը պատրաստուին հայերէն, պուլկարիւրէն, ֆրանսերէն եւ յունարէն լեզուներով ընկալագրեր, հասցէներ, հարսանեաց եւ այլ հրատարակութեան հասցէն:

Գրեթ ՉԱՓԱՆՈՐ
Փափագողք պարտին գիմլիլըմա գրութեան հասցէն:

Ա Ձ Գ

Իրաւունք կը ծախուի Սասուն սրճարանի ծխալոծառ Պ. Վահան Անտօնեանի, Մուսալլա գուրու գահվէճի Պ. Յակոբ կէօզիւպէյիւք եանի եւ Ապտիւրահման միլլիթին դէմ Հայկական Գրատան մէջ ի վառնա: